

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

23.05.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ.Հովհաննիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա.Շաբոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի գլխավոր մասնագետ Կ.Շահբազյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության պետ Վ.Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ս.Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա.Հակոբյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների

կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Իտալիայի Թուրին քաղաքում 2012 թվականի մարտի 5-ից 6-ը «Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի գնահատման համար փաստագրված տվյալների հավաքագրում» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

2.2. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2012 թվականի մարտի 12-ից 16-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «EUROTRACE» խորագրով դասընթացի երկրորդ փուլին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Կ.Շահբազյան, Ռ.Պետրոսյան/

2.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի ապրիլի 9-ից 10-ը «ԱՀՀ 2008 դրույթները վիճակագրական պրակտիկայում ներդրման հետ կապված ԱՊՀ երկրների նախապատրաստման հարցերով» ԱՊՀ

տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Լ.Խաչատրյան, Ս.Խաչատրյան/

2.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2012 թվականի ապրիլի 11-ից 13-ը «ՄԱԿ-ի ԵՏՀ վիճակագրության բաժնի և Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության կողմից Եվրամիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի եւ Միջին Ասիայի երկրների վիճակագիրների և բնապահպանների համար համատեղ կազմակերպած թափոնների վիճակագրությանը նվիրված սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Յու. Պողոսյան/

2.5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի ապրիլի 16-ից 19-ը Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության կողմից կազմակերպված «Աջակցություն մարդահամարների անցկացման ժամանակ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործմանը» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցողներ՝ Վ. Գևորգյան, Ռ. Հովհաննիսյան/

2.6. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի ապրիլի 18-ից 19-ը «Եվրոպական բնապահպանական գործակալության կողմից կազմակերպված ԵՀՔ նախագծի իրականացման առաջնայնության՝ Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգի /PSUՀ, ENPI-SEIS/ Մեթատվյալների և հաշվետվական ցանցի վերաբերյալ» սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա. Հակոբյան/

2.7. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի ապրիլի 18-ից 21-ը «ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 47-րդ նիստին» մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Լ. Միրզոյան/

2.8. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի ապրիլի 23-ից 27-ը ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի և «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի

կողմից կազմակերպված «Ընտրանքային հետազոտության կազմակերպումը» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա.Դաշյան, Ա.Շաբոյան/

2.9. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի ապրիլի 23-ից 27-ը «Աջակցություն Հայաստանի վիճակագրական ծառայությանը» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում քննարկումներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան, Ն.Մուշեղյան/

2.10. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2012 թվականի մայիսի 3-ից 4-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Վիճակագրությունը և փաստերի վրա հիմնված որոշումների կայացումը» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

08.06.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, Լ.Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետի պաշտոնակատար Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ

աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Երևան քաղաքի գործակալության պետ Վ.Ավետիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա.Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը:

Նիսրում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների Եռամյա ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Դաշյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների Եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի մարտի 27-ից 30-ը «Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում, ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների ծրագրով համադրումների աշխատանքների իրականացման նպատակով ներդրումային ապրանք-ներկայացուցիչների և շինարարական նյութերի և կառուցվածքների 2011 թվականի գնային տեղեկատվության ստուգման ու համաձայնեցման համար կազմակերպված» աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/

2.2. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի ապրիլի 23-ից 27-ը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ԹՎԻՆԻՆԸԳ

ծրագրի «Բիզնես վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում այցելություն Դանիայի վիճակագրական ծառայություն:

/Զեկուցողներ՝ Ա.Հայրապետյան, Վ.Ավետիսյան/

2.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2012 թվականի ապրիլի 30-ից մայիսի 4-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի համատեղ աշխատանքների շրջանակներում կազմակերպված, Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի հանդիպման 11-րդ սեսիայի, «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի ներդրում» թեմայով խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/

2.4. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի մայիսի 15-ից 17-ը ԱՊՀ երկրների միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից կադրերի վերապատրաստում ծրագիր նախագծի երրորդ փուլի շրջանակում կազմակերպված «Արտադրության ինդեքսների հաշվարկ» ուսումնական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա. Անանյան, Հ.Հակոբյան/

2.5. Հաղորդում՝ Չիլիի Սանտյագո քաղաքում 2012 թվականի մայիսի 15-ից 17-ը ՄԱԿ-ի Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Գիտելիքների փոխանակում ՀՋՆ-ի մոնիթորինգի և հաշվետվողականության կատարելագործման նպատակով» ՀՋՆ ցուցանիշների վերաբերյալ միջտարածաշրջանային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

2.6. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2012 թվականի մայիսի 21-ից 23-ը Ազատ առևտրի Եվրոպական ասոցիացիայի կողմից կազմակերպված «Գների վիճակագրություն» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ.Մարտիրոսյան, Մ.Երիցյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/